

հզոր միջնորդութիւնը դործածեց Եւդոք- սիա կայսրուհիին մօտ, որմէ սիրուած ու յարգուած էր: Հաւանաբար Հայոց թա- դաւորադն իշխանները, որ են երկու Գա- դիկները եւ երկու Արծրունիները, Սալիկ կաթողիկոսին մեռնելէն եւ Դուկաս կայ- սեր դրած արգելքէն ետքը, խորհրդակ- ցած էին թէ ով կաթողիկոս ընտրեն, որ կայսեր հաճելի ըլլայ, դործը աւելի դիւ- րին կերպով յաջողցնելու համար:

Այսպէս հնար եղաւ համոզել Դուկաս կայսրը, որ ընտրութեան եւ օծման հրա- ման տուաւ արքայական գրչով, զոր եւ ինքեց ոսկի մատանիով: Այսպէս յաջողե- ցաւ կաթողիկոսական թափուր աթոռին տեւական վտանգը փարատել, ինչ որ թէ՛ կրօնապէս եւ թէ՛ քաղաքականապէս ազա- տարար պիտի ըլլար հայութեան համար:

Վերջապէս եթէ Անիի նախկին թագա-ւորը իր ընդդիմադիր լեզուով յոռի տպա-ւորութիւն մը թողեր էր Բիւզանդական արքունիքին վրայ, ընդհակառակն Դու-կաս կայսրը «արար մեծ սէր, ընդունե-լուքիւն, եւ շնորհեաց բազում պարգեւս Գազկայ, (անշուշտ՝ Արասեանին) եւ Ա-տումայ եւ Աբու Սահլի, եւ այլոց իշխա-նացն»³: Այս խօսքերով պէտք է հասկնալ թէ Կարսի նախկին թագաւորը եւ Արծրու-նի իշխանները աւելի զինող դերք մը բռն-նած են Կ. Պոլսոյ բանակցութեան շրջա-նին: Շատ յուզիչ է նկատել Փոքր Հայոց վտարանդի Կարսի նախկին թագաւորին եւ հայ իշխաններու թափած ջանքերը, օր ա-ռաջ Լուսաւորչի աթոռը դրաւուած տես-նելու արժանաւոր ու ազդեցիկ անձէ մը: «Անոնք, կ'ըսէ Ալիշան, սրտի կսկիծով կը տեսնէին թէ ինչպէս ազգային քաղաքա-կան միապետութիւնը ջնջուեր էր մեծ Հայոց մէջ, իրենք՝ Փոքր Հայոց տարա-դրուած արքայազունները եւ իշխանները՝ անստոյգ եւ չիջանող կեանք մը կը վա-րէին. ու թէ եւ թագաւորական անուններ եւ նշաններ ունէին, այլ երթալով կը նը-ւաղէին, եւ չկրցան աւանդել զայն իրենց որդիներուն, ոչ Գազիկ Ծահնշահ Անե-ցին, ոչ Գազիկ թագաւոր Կարսեցին եւ ոչ ալ Վասպուրականի Սենեքերիմ թա-

գաւորի Ատոմ եւ Ապու Սահլ որդիներն, որոնք մէկիկ մէկիկ պիտի մարէին»⁴: Ուստի միակ յոյս եւ ապաւէն կը մնար հայրապետական աթոռը, իրեւ խորհրդ-դանիչ հայկական ընդդիմութեան, որուն վրայ պիտի կեդրոնանար Հայոց աշխար-հը, ինչպէս եղեր էր Արաբական տիրապե-տութեան օրով:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԻՆ

Միջին դարու մեր պատմագիրները չը-փոթ մտքեր կը յայտնեն կաթողիկոսական ընտրելիի մասին: Կիրակոս պատմիչը, որ դէպքէն զրեթէ մէկ ու կէս դար ետք կ'ա-յրէր, կը գրէ թէ «աշխարհս Հայոց ժո-ղովեալ ի մի վայր, կացուցանեմ հայրա-պետ գտէր Վահրամ»⁵: Իսկ Շնորհալին կը գրէ թէ «գիարս Հայոց անդ ժողովեալ, եւ միաբան խորհրդածեալ»⁶: Մ. Ուռհայե-ցին, մեր ցաւատանջ պատմիչը, որ իր դրածները տեսնողներէ եւ խողներէ քա-ղեր է, կը գրէ թէ «որք մնացեալ էին ի քաղաւորացն եւ իշխանացն Հայոց, խըն-դիր արարին գտանել զմի ոմ արժանաւոր, զի նստցի յաքոռն հայրապետութեան սուրբ Լուսաւորչին Գրիգորի, եւ գտին մանուկ մի յագգէ Պահլաւունեաց՝ Վաի-րամ անուն, գորդին Գրիգորի Մագիստրո-սի, մեծի իշխանին Հայոց... տեսին ար-ժանաւոր սուրբ Արքայուն»⁷: Այս վկայու-թիւններէն այն կը հետեւի, որ Գանձակե-ցին արձագանդ կ'ըլլայ ազգային հին սո-վորութեան մը, որով հայ թագաւորը, ինչպէս Արշակ երկրորդ մը, չըջապատ-ուած հայ բանակով, հայրապետական դահը կը բարձրացնէր ժողովրդական ըն-տրելի մը, եւ այս է «աշխարհս Հայոց ժողովեալ» ի իմաստը, ինչ որ ներկայ ի-րականութեան չի համապատասխաներ:

3. Մ. Ուռհ. Բ. 215:

4. Ալիշան «Շնորհ. եւ Պարագ. իւր», էջ 37:

5. Կիրակոս Գանձ. 54:

6. Ն. Շնորհ. Բանք Զափաւ, Վենետ. 1928, էջ 544:

7. Մ. Ուռհ. Բ. 185-186:

Շնորհալին եւ Մ. Ուռհայեցին դրած-ները աւելի խոր իմաստ ունին, եւ կը հա-մապատասխանեն իրականութեան: Ար-գաւրեւ շատ տրամաբանական է որ հայ-կազուն թագաւորը եւ հայ իշխանները Կ. Պոլսոյ բանակցութեան երթալէն առաջ, Գազիկ Արասեանի նախադահութեան Գազիկ Արասեանի ժողով մը դու-մարած ըլլան՝ Ծամնդաւի մէջ, մասնակ-ցութեամբ եպիսկոպոսներու եւ վարդա-պետներու, որպէս զի ընտրութիւնը ազ-գային հանգամանք մը առնէ: Ինչպէս տե-սանք, Պետրոս եւ Սալիկ կաթողիկոսնե-րը Բիւզանդիոնի կայսրներու կասկածելի-րը հաւանաբար իրենց հայրենա-կաւ իշխաններէն, իրե թէ կրօնական հայրենա-սէրներու խումբին զլուխ կանգնել եւ հայ ժողովուրդը ապստամբութեան մղել փա-թաղող անձեր՝ Բիւզանդիոնի կայսրու-թեան դէմ. ուստի պէտք էր պայծառա-թեան լուր տեսնել Լուսաւորչի դահին տես ըլլալ, ընտրելով Լուսաւորչի դահին աշխարհի անձ մը՝ որ կարենար վստահու-թեան արժանի ըլլալ. աշխարհի մէկը, ո-րուն յունասէր զգացումները ամէն կաս-կածէ վեր ըլլային, եւ որուն անցեալը ե-րաշխաւոր ըլլար իր ապագայ յունասէր դործունէութեան:

Այսպիսի մէկը արդէն կար, եւ էր Պահ-լաւունի իշխան մը. դաւանանքով, ուսու-մով եւ կրթութեամբ յունաց հետ միա-ցած, որով վստահելի էր Բիւզանդիոնի ցած, որով վստահելի էր Բիւզանդիոնի արքունիքին: Հայ իշխաններու վստահու-թիւնը կաթողիկոսական ընտրելիին մա-սին՝ միայն քաղաքական պայմաններէ չէր բխեր, այլ տոհմային շահին տեսակէտն ալ կը նկատէին: Իրենց համար պարծանք ալ կը նկատէին: Իրենց համար վրայ մըն էր կաթողիկոսական աթոռի վրայ տեսնել աղնուատոհմ ընտանիքէ անձ մը, քան սոսկ եպիսկոպոս մը, վարդապետ մը, քան սոսկ կաթողիկոսական աթոռի վրայ տեսնել վանական մը: Այսպէս Կ. Պոլսոյ դա-ցած ժամանակ, Գազիկ Արասեան՝ Դու-կաս կայսրը համոզելու ճշմարտութեան, կարգէն ընտրելին որոշուած էր, այնպէս որ վարդան պատմիչ կրնար գրել, «խըն-դիր հրամանս ձեռնադրել Հայոց պատրի-արք»⁸:

Մինչ Գազիկ Արասեան նոր կաթողիկո-սի ընտրութեան եւ օծման հրամանագրերը

առած՝ իրեն ուղեկից իշխաններով կը վե-րադառնար Ծամնդաւ բերդաքաղաքը, ան-դին Գազիկ, Անիի նախկին թագաւորը, հետեւելով բուռն բնաւորութեան զգա-ցումներուն՝ Բիւզանդիոնէն մեկնելու եւ հասնելու իր իշխանութեան աթոռը, եւ «որպէս էր յառաջագոյն զայրացեալ ընդ Յունաց»⁹: Ան ուղեց իր բուռն առեւտ-րիւնը Կեսարիա հասած թափել Յոյնե-րուն վրայ:

ԿԱՏՈՂԻ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՅ ՄԻՋԵՒ

Ոչ միայն կայսրն ու պատրիարքը սէր եւ խաղաղութիւն բրած չէին Հայոց թա-գաւորներու որդիներուն հետ, ինչպէս Մ. Ուռհայեցին կը կարծէր, այլ այն խուլ տաւելութիւնը, որ Մովսէս Եղիվարդեցի տաւելութիւնը, որ Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսէն սկսեալ կը տիրէր Յունաց եւ Հայոց միջեւ, Կ. Պոլսոյ ձախողանքէն եւ անմիջապէս ետք փոխուեցաւ կատաղի ա-տելութեան մը:

Յոյները տեսնելով թէ իրենց կայսրը, պատրիարքը, իշխաններն ու առաջնորդը Հայոց թշնամի են, եւ ամէն չարիք կ'ու-ղեն անոնց հասցնել, աւելի վստահու-թեամբ կ'արհամարհէին զանոնք, եւ նա-խապաշարով անոնց սրտերը կը խառնական խօսքերով անոնց ամէն վիրաւորէին, համարելով զանոնք ամէն փրկաւորէին, համարելով զանոնք ամէն քաղաքներէն անցնէր, թշնամանքով ու հայհոյանքներով այնպիսին դուրս կը վը-որնոտէին, կա'մ կը ծեծէին եւ կամ շատ չարիքներ կը հասցնէին անոր¹⁰:

Հայերն ալ, իրենց կարգին տաւելութիւ-նը տաւելութեամբ փոխարինեցին: Անոնց նը տաւելութեամբ փոխարինեցին: Անոնց համար «սուղ մը եղաւ, կ'ըսէ Մ. Ուռ-հայեցին, երբ լսեցին թէ թագաւորներու հայեցին, որքան միկրուած են»¹¹: Եթէ որդիները Հոռոմ միկրուած են՝

8. Վարդան Պատմ. 102:

9. Մ. Ուռհ. Բ. 216:

10. Հմմտ. Մ. Ուռհ. Բ. 271:

11. Մ. Ուռհ. Բ. 271-272:

